ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

07 հոկտեմբեր, 2014թ. ք. Երևան

ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի քննարկում Լոռու մարզում

2014 թվականի հոկտեմբերի 7-ին Վանաձորում կայացավ ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում՝ Լոռու մարզի ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մասնակցությամբ: Այն կազմակերպվել էր ՀԵԻԱ-ի կողմից՝ Եվրոմիության կողմից՝ ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում: Քննարկման ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԵԻԱ-ի գործադիր տնօրեն, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի համակարգող/դրամաշնորհների պատասխանատու Արտակ Սարիբեկյանը, Հակակոռուպցիոն ռազմավարության աշխատանքային խմբի քարտուղարը Մարիամ Գալստյանը, ով նաև ներկայացրեց ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակած 2014-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը: Ծրագրի փորձագետների կողմից ներկայացվեց Հակակոռուպցիոն բազմաֆունկցիոնալ անկախ մարմնի ստեղծման և ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավորությունը Հայաստանում:

Ներկայացումներից հետո ծավալվեցին ակտիվ քննարկումներ, ներկաները հանդես եկան առաջարկություններով, արտահայտեցին իրենց կարծիքներ: Մասնավորապես, «Նախաձեռնող երիտասարդություն, զարգացող համայնք» նախաձեռնող խմբի անդամ Հենրի Մխիթարյանն առաջարկեց Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգումն ու իրականացումն իրականացնել ՔՀԿ-ների միջոցով, ոչ թե պետական պաշտոնյաների: Իսկ «Լոռեցիների միավորում» ԲՀԿ-ի նախագահ Մենուա Բրուտյանը խոսեց կոռուպցիան ծնող պատճառներն ուսումնասիրելու և վեր հանելու անհրաժեշտության մասին, այնուհետև ներկայացրեց երկու առաջարկություն. բարեփոխումների համար շեշտը դնել կրթության և երիտասարդ սերնդի մոտ հակակոռուպցիոն մտածելակերպի ձևավորման վրա, քանի որ այդ միջոցով կարելի է հասնել համակարգային փոփոխությունների: Իսկ երկրորդ առաջարկությունը վերաբերվում էր Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգում ու դրանց կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող խորհրդի ղեկավարմանը, ըստ որի առաջարկեց վերանայել խորհրդի ղեկավարումը ՀՀ վարչապետի կողմից իրականացնելու դրույթը և առհասարակ ղեկավարման գործառույթը փոխարինել նիստերը նախագահելու գործառույթով:

Հանրային քննարկման ընթացքում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների կողմից արված բոլոր առաջարկությունները կամփոփվեն և կներկայացվեն ՀՀ արդարադատության նախարարություն:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Գատարող՝ Նարինե Կարապետյան, էլ.փոստ՝ pr@ayla.am

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: